

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ԶԵՄԱՐԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Հոգևոր ձեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն ձեմարանիս մատուցեն ինդիր յանուն Ամենապատէ՛մ Տէրապետն, ոչ անագան քան զՀնգե-տասանն Օգոստոս ամսոյ: (Կան. 74 յօդ.):

3. Ընդ ինդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զննին ի բժշկէ ձեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան ձեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս ձեմարանիս. իսկ վասն մտանելոյ յԱռաջին Լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական Խորհուրդն:

Ծանօթութիւն: Վասն մտանելոյ յԳ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից Երկրագնացական-ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Վաթուղիկոսէն, ի պէտս Երկրագնաց:

7. Յանկացողք մտանել յառաջին լսարան ձեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ զնի աւարտման անցեալ իջէ ի վերայ առաւել քան զամ մի:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց, որք արժանաւոր դատիցին յՈւսումնական Խորհրդոյն:

Մանգո-Բեռն: Պահանջի զի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարողիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9. յԳ. դասարան ձեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14 — 16 ամեայք, և ըստ այսմ Համեմատութեան ի յաջորդ դասարանս:

10. Աշակերտք ձեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակատուքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս:

11. Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի յայսմ ամի, ըստ բարեհաճ կարգադրութեան Ամենապատիւ Տեղակալին: (Կանոնադր. յօդ. 83):

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսպոյս Կովկասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հատուցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13. Իւրաքանչիւր թոշակատու վճարեսցէ ի տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս. ի սեպտեմբեր և ի յունուար ամիսս:

14. Եթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակեսցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուցի յետս:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց:

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ: